ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պարեկային ծառայողի կողմից կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության ապացուցողական նշանակության վերաբերյալ

Սույն վերլուծությունն իրականացվել է «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) դիմումատուներից մեկի ներկայացրած խնդրի հիման վրա, որը վերաբերում է ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պարեկային ծառայության աշխատակցի կողմից, առանց համապատասխան տեխնիկական միջոցներով ձեռք բերված ապացույցների, իր իսկ կազմած արձանագրության հիման վրա անձին վարչական պատասխանատվության ենթարկելու իրավաչափությանը:

Տվյալ դեպքում Պարեկայի ծառայողը ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կասկածանքով կանգնեցրած տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ, առանց հիմնավորման վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն է կազմել, և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 11-րդ կետի հատկանիշներով կայացրել է միջամտող վարչական ակտ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 11-րդ կետը վերաբերում է այն դեպքերին, երբ տրանսպորտային միջոցի վարորդը թեկուզ մեկ ձեռքի օգտագործմամբ ընթացքի ժամանակ օգտվում է ռադիոկապից և (կամ) հեռախոսակապից: Սակայն, տվյալ գործով առկա չէ ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված ՀՀ Կառավարության 32.11.2006թ. թիվ 1769-Ն որոշմամբ նախատեսված տեխնիկական միջոցներով ձեռք բերված և դրա թույլատրելիության բոլոր չափանիշներին համապատասխանող որևէ ապացույց, որով կարող էր հիմնավորվել վարորդին վերագրվող իրավախախտումը կատարած լինելու փաստը:

Նշված իրավիճակում խնդրահարույց հանգամանքը ոչ այնքան ճանապարհային երթևեկությունը կարգավորող պարեկային ծառայողի անհիմնա վարչարարությունն է, որքան որ վարչական ակտի վերադասություն կարգով բողոքարկման արդյունքում ՀՀ Պարեկային ծառայության պետի անունից տրված օրենքի մեկնաբանությունը:

Մասնավորապես, ՀՀ Պարեկային ծառայության պետի պարզաբանմամբ՝ *օրենսդիրը ոստիկանության ծառայողին իրավախախտումը հայտնաբերելու, արձանագրություն կազմելու և որոշում կայացնելու լիազորություն տալով՝ որպես պարտադիր պայման չի նշում իրավախախտման փաստարկման համար տեխնիկական սարքի կիրառումը:*

Սակայն մեր կարծիքով օրենքի այսպիսի մեկնաբանությամբ վարորդի նկատմամբ միջամտող վարչական ակտ կայացնելը խախտում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ անձի իրավունքների պաշտպանության երաշխիքները հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ *մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:*

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ *(...) պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:*

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի» 3-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական (...) մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝*

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (...),

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3)նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ *վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ *վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ *անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *վիճարկման հայցով ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով (...):*

Նույն օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:*

Վերոգրյալից հետևում է, որ վարչական մարմինը վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս պարտավոր է հետազոտել բոլոր ապացույցները և որոշում կայացնել բացառապես ապացույցների հիման վրա: Ընդ որում, վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները և տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Միևնույն ժամանակ, անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների, այդ թվում՝ վարչական իրավախախտման դեպքի առկայության ապացուցման բեռը վարչական վարույթի փուլից սկսած, ընդհուպ մինչև դատական պաշտպանության փուլը ներառյալ, կրում

է վարչական մարմինը, ով և նշված պարտականությունը պատշաճ չիրականացնելու և ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ չապացուցված մնալու դեպքում՝ կրում է նշվածի բացասական հետևանքները:

Քննարկվող գործով Պարեկային ծառայողի կողմից կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որը սակայն, ինքնին չի կարող բավարար համարվել վարչական իրավախախտման փաստը հաստատված համարելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վեճի առարկա հանդիսացող որոշման վիճարկման հիմքում ընկած է հենց դրանում արձանագրված փաստերի վիճարկումը:

Ուստի պետք է արձանագրել, որ միայն Պարեկային ծառայողի կողմից կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ չի կարող հիմնավորվել անձի կողմից ձեռքի օգտագործմամբ ընթացքի ժամանակ հեռախոսակապից օգտվելու փաստը, հետևաբար «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի» 29-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ դրա բացասական հետևանքները պետք է կրի ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությունը՝ որպես վիճարկվող վարչական ակտի համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրող կողմ:

Այլ խոսքով, **նշված իրավիճակում անձին վերագրվող իրավախախտման վերաբերյալ փաստական հանգամանքը պետք է համարել չապացուցված, իսկ իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման դեպքը՝ բացակայող՝ զանցակազմի օբյեկտիվ կողմ հանդիսացող արարքն իմ կողմից կատարվելը ապացուցված չլինելու հիմքով:**

Այդուհանդերձ, չապացուցված արարքն իր հերթին անձին վարչական պատասխանատվության ենթարկելը բացառող հանգամանք է, ուստի նման պայմաններում ընդունված վարչական ակտը հանդիսանում է ոչ իրավաչափ վարչարարության արդյունք և ենթակա է անվավեր ճանաչման:

Հարկ է նկատել նաև, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ *քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝*

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Նույն օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:*

Վերը մեջբերված իրավադրույթները վկայում են, որ դեռևս վարչական վարույթի փուլում Պարեկային ծառայությունը պետք է ընդուներ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետով նախատեսված որոշումը՝ փոխկապակցված նույն օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետի հետ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ *անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝*

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում (...)»:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ համապատասխան տեխնիկական միջոցներով ձեռք բերված ապացույցների բացակայության պայմաններում, միայն Պարեկային ծառայողի կազմած արձանագրության հիման վրա անձի նկատմամբ միջամտող վարչական ակտ ընդունելը խախտում է օրենքի վերը վկայակոչված դրույթները և պետք է ամբողջությամբ անվավեր ճանաչվի ՀՀ վարչական դատարանի որոշմամբ:

Նոյեմբեր 2025թ.

Կատարող, իրավաբան՝
Նաիրա Ավետիսյան

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն, Կենտրոնական գրասենյակ (Երևան)